

Կտորներից Կազմված Երազանք, Թե Միասնական Հաղթանակ

Իմ պատմությունն կուգեի սկսել մեր հայ հայտնի գրող Եղիշե Չարենցի խոսքերով.« Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունդ քո միասնության մեջ է»: Այս խոսքերը միտքս եկան, երբ այս տարի իմ կյանքում կարեկոտ բան մը պատահեցավ, երբ ես տեսա իմ ազգիս մի փոքր մասի բաժանման արդյունքը: Չնայած որ ,պատմությունս լինելու է իմ հայրենիքիս պարտությունից դուրս գալու հանապարհներ գտնելու մասին, Բայց մինչև այդ, կուգեի մի փոքրիկ մաս պատմել իմ կյանքից , որը ինձ մտածել տվեց, թե որն էր մեր՝ հայերիս, թերությունը եւ ինչպես պետք է գործենք ապագայում , որ կարողանանք հաղթահարել պատերազմի պարտության եւ մեր զինվորների կորցնելու ցավը, նաեւ ելքեր գտնել մեր հայրենիքը ծաղկեցնելու եւ նոր, գեղեցիկ, ուժեղ, ուրախ եւ ապահով ապագա ստեղծել մեզ համար: Խոսքս կուգեմ սկսել Բլեիի դպրոցի Հայկական Ակադեմիայի բացման պատմությունից: Լուս Անջելուսի հայաշատ Փասադենա քաղաքի մեջ մենք ունեինք հայկական բարձր դասարանների համար նախատեսված միակ դպրոցը, որը մեր համայնքի ուրախ եւ լուսավոր կետերից մեկն էր հայ աշակերտների համար եւ որտեղ հայ աշակերտները միջին կրթությունը ավարտելուց հետո փոխադրվում էին այնտեղ , հայեցի ուսումը շարունակելու նպատակով: Սակայն մեկ օր մեզ հասավ շատ ցավալի եւ մեզ համար անսպասելի լուրը: Դպրոցի հիմնադիրները որոշել էին փակել դպրոցը , եւ մեր մոտավորապես հարյուր վարսուն աշակերտներ , գումարած միջին դպրոցը ավարտող աշակերտներ, մնալու են առանց իրենց միակ , սիրելի, հայկական բարձրագույն դպրոցի, առանց իրենց հայեցի անկյունի եւ առանց միջավայրի , որը տասնյակ տարիներ ստեղծել էին սիրով: Իմ շրջապատում ամենի՝ իմ ընկերների, իմ բարեկամների աչքերում արցունքներ էին լցված՝ անհարության, կորստի եւ ավստասնքի արցունքներ: Փորձեցինք պայքարել, որպեսզի պահենք մեր դպրոցը , բայց դիմացի ուժը շատ

հզոր էր եւ կանգուն : Փորձեցինք թակել տարբեր հայկական կառույցների դռները, բայց ոչ ոք մեզ՝ հայ առակերտիս ձայնը չլսեց : Թվում էր թե հար չկա, բայց լույսի անսպասելի շող երեսաց : Փասադենա ֆադաֆի պետական դպրոցների հանձնաժողովը՝ մեր ծնողներից մեկի ջանքերի շնորհիվ, իմանալով մեր հիասթափության եւ հայ ազգի լեզուն , մշակույթը պահպանելու մեր հայ առակերտի ցանկության մասին , լսեց մեր ձայնը եւ մեզ տրամադրեց դպրոց, որը ուներ ուսումնական բարձր մակարդակի ծրագրեր, եւ որը իհարկե պիտի ունենար հայերեն լեզվի, գրականության, պատմության, արվեստի եւ մշակութի դասընթացներ հայ դասատուների մասնակցությամբ, ինչպես նաեւ հայկական ակումբ : Եւ այս ամենը անվհար: Բայց մենք՝ հայ առակերտներս, պետք է դպրոցը կիսելինք օտար առակերտների հետ: Լուրը լսելուն պես միտքս եկավ Վիլիամ Սարոյանի տողերից մեկը « Եթե երկու հայ հանդիպեն օտար հողի վրա, նրանք կստեղծեն նոր Հայաստան»: Եւ ես այնքան ինձ վստահ զգացի մտածելով , որ մենք ոչ թե երկու այլ երկու հարյուր հայ ենք ամենս միասին եւ մեզ համար ոչ մի խնդիր չի լինի մեկս մյուսի ձեռքը բռնելով ստեղծել նոր Հայաստան Բլեիք դպրոցի մեջ: Սա նոր հույս էր օտար ափերում՝ Փասադենա ֆադաֆի մեջ, ստեղծել նոր կենտրոն՝ հայ ազգային գաղափարների, լեզվի, մշակույթի, արվեստի պահպանման համար եւ այս ամենը մեզ տրվելու էր անվհար: Իմ ոգեվորությունը շատ մեծ էր , քանի որ այս ամենը լինելու էր նաեւ իմ մասնակցությամբ եւ ոչ թե միայն իմ օգուտի այլ նաեւ իմ ազգի համար: Եւ ես զգացի որ մենք՝ Լյու Անջելեսի մեջ գտնվող հայ առակերտներս, պիտի լինենք այն ուժը , որը հիասթափությունից հետո , դժվար վիճակում գտնվելով , մեր միասնականության ուժի շնորհիվ պիտի հասնենք մեր նպատակին: Բայց ես սխալվեցի , քանի որ երկու հարյուր հայ ծնող եւ մեր հայկական տարբեր կառույցներ թիկունքով կանգնեցին այս գաղափարին եւ մասնավեցին՝ ամեն մեկը մտածելով միայն իր անձնական շահի եւ հետաքրքրությունների մասին , շարժվեցին տարբեր ուղղություններով : Մնացին միայն մի խումբ առակերտներ, որոնք պիտի փորձեին լինել այն փոքրիկ մասնիկը, որը այս դպրոցի մեջ պիտի ստեղծեր հայեցի միջավայր , որտեղ ապագայում անվհար հայկական ուսումնական պիտի ստանան գալիք հայ սերունդները: Եւ զգացի իմ մեջ մեծ ուժ

հոյսով եւ ոգեւորությամբ գործի անցնելու եւ հաղթահարելու դժվարությունները հասնել առաջնային նպատակի՝ իմ հայ լինելու հանաչմանը եւ տարածմանը: Այս միջոցին, երբ ոգեւորությունս շատ մեծ էր, սկսվեց հայոց պատմության ամենացավալի էջերից մեկը՝ Արցախյան պատերազմը, եւ իմ փոքրիկ քաղաքի փոքրիկ պատմությունը իր նմանությամբ, բայց շատ ավելի սարսափելի եւ ցավալի ստացավ նոր թեւեր եւ սեղավորվեց իմ հայրենի հողի վրա: Եւ նորից սկսեցինք ապրել նույն ցավը , սակայն այժմ ազգովի եւ շատ խորն ու ցավալի:

Նորից նույն պայմարը՝ բայց հիմա թեմամու դեմ: Թեմամին իր շուրջ էր միաւորել հսկայական ուժեր, որոնց դեմ մենք անգոր էինք: Նորից փորձեցինք թակել թվացյալ բարեկամների դռները, բայց ինչպես իմ փոքրիկ պատմության մեջ, այստեղ նույնպես բոլոր դռները փակվեցին եւ ոչ ոք չլսեց հայ ազգի օգնություն խնդրող ձայնը: Եւ կրկին իմ փոքրիկ պատմությունը կրկնվում էր, բայց ավելի խորն ու ցավալի: Նորից փորձ էր կատարվում ջնջել հայի տեսակը, մշակույթն ու արվեստը գեներալ ուժով: Նորից կանգնած էինք անբուռնի եզրին , որտեղից ելք չկար: Եւ նորից միտքս եկավ մեր հայ հանրարի խոսքերը« Հայը կա, կլինի, եւ կշատանա»: Եւ նորից հույսս վերականգնվեց : Այո , հանձնվել չկա: Այո, պարտվել եմք , բայց սա վերջը չէ: Սա նորից կանգնելու եւ ավելի իմաստուն եւ ուժեղ դառնալու սկիզբն է : Եւ ես փորձեցի կանգնել եւ գտնել առաջ գնալու հանապարհներ եւ ոչ թե վիրավոր ընկած սպասել վերջին: Բայց կրկին տեսա իմ ազգիս պառակտվածությունը եւ տեսա թե ինչպես հայը նորից պատերազմի ցավը դեռ չհախթահարած իր անձնական շահերի համար մասնատվում է: Բայց այս ամենը լավ դաս էր ինձ համար: Դաս , որը ես ստացա իմ փոքրիկ եւ մեծ պատմություններից: Ես հասկացա , որ միակ հանապարհը որը մեզ հաջողության կտանի դա մեր միասնությունն է մեկ գաղափարի շուրջ որն է՝ ՀԱՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ: Պետք է մեկ կողմ դնենք անձնական շահերը եւ մեզ նվիրենք մեր հայրենիքի հզորացման գործին: Իհարկե միասնականությունը հիմք ընդունելով մենք՝ աշխարհիս հայերը որպես մեկ մարմին պետք է սկսենք գործել մի քանի ուղղություններով՝ մեր հայրենիքը ոտքի կանգնեցնելու եւ հզորացնելու գործում: Ես կարծում եմ , որ այդ ուղղություններից մեկն է

Սփյուռփում գտնվող երիտասարդների, որոնք ունեն առաջատար համալսարանների կրթություն եւ փորձ, հրավիրել հայրենիք աշխատելու , իհարկե բարձր աշխատավարձով: Աշխատավարձը կարող են ապահովել ազգային տարեկան տուրքի տեսքով, եւ այդ տուրքը պիտի տան աշխարհի բոլոր հայերը: Կարելի է սահմանել այնպիսի գումար , որ բոլորին հասանելի լինի եւ լինի պարբերաբար՝ ամեն ամիս: Որպեսզի սփյուռփահայերը՝ հատկապես նոր սերունդը ոգեւորված լինի հայրենիքի գարգացման գործով եւ կապվածություն զգա հայրենիքին , պետք է լինեն ծրագրեր սփյուռփի երեխաների համար՝ ամառը Հայաստանում անցկացնելու: Սա իմ փորձից եմ ասում , քանի որ ես ամեն տարի ամառը այցելում եմ Հայաստան եւ դա ինձ ավելի ու ավելի է օգնում , որ իմ կապը եւ սերը ուժեղանա հայրենիքի հետ: Սակայն հասկանում եմ որ ոչ բոլոր ընտանիքները կարող են դա ապահովել, տարբեր պատճառներով, բայց սա էլ հնարավոր կլինի Հայաստանի Հանրապետության շնորհիվ, որը կարող է հազմակերպել անվճար համբարներ եւ ստեղծել պայմաններ սփյուռփի պատանիների ամառային հանգիստը հայրենիքում անցկացնելու: Կարելի է նայել Սփյուռփում գտնվող հայկական դպրոցների աշակերտների հեռուար կապը ստեղծել հայաստանի դպրոցների աշակերտների հետ եւ շաբաթը մեկ ,երկու անգամ շփումներ կազմակերպել: Օրինակ Բլեիս դպրոցի հայկական ակադեմիան կարող է կապ հաստատել Հայաստանում գտնվող որեւէ դպրոցի հետ եւ անգլերենի հեռավար դասընթացներ անցկացնել Հայաստանի աշակերտների հետ: Մեկ այլ գարգացման ուղիներից մեկն է նաեւ Հայաստանում ապրող ուսանողների ֆինանսավորումը, որպեսզի սովորեն աշխարհի լավագույն համալսարաններում եւ իհարկե ավարտելուց հետո վերադարձի պայմանագրով : Ներքին հարցերից բացի, մենք նաեւ ունենք արտաքին աշխարհի հետ կապված հարցեր : Դա մեր հարելանների հետ ֆադաֆական եւ ազգային , կրոնական խնդիրներն են: Մենք ունենք հայրենիք որն տեղավորված է մեզ՝ հայերիս համար ոչ բարենպաստ տարածքում, սակայն մենք չենք կարող մեր հայրենիքը տեղավիժել ուրիշ տարածք եւ այդ պատճառով մենք պետք է դիվանագիտական տարբեր հանապարհներ փնտրենք փոխառաջադրելու համար: Քանի որ ես

հավատում եմ , որ հայը խելացի եւ աշխատասեր ազգ է եւ կարող է իր մտքի ճկունությամբ հասնել բարձրունքների նաեւ պետք է մտածել ուղղիներ որով մենք նորովի կներկայանանք աշխարհին: Այս կետին մենք կարող ենք հասնել գիտական բնագավառում արժանի մրցակից դառնալով զարգացած երկրների հետ եւ ինտերկետ սա հնարավոր է 21րդ դարի տված առավելությունների օգտագործման միջոցով որոնցից մեկը արհեստական բանականությունն է : Այն մեզ հնարավորություն է տալիս առանց մեծ Գումարներ ծախսելու , խելացի, բանիմաց գիտական աշխատողների շնորհիվ ունենալ նոր գաղափարներ եւ նոր ձեւով ներկայանալ աշխարհին: Եւ այս ամենը հնարավոր է եթե մենք բոլորս աշխատենք միասին, ինչպես Ամերիկայում կասեն **team work**, որպեսզի կարողանանք դժվարության մէջ ընկաց մէր ընտանիքը ստի կանգնեցնենք եւ շենացնենք: Ես հավատում եմ ,որ մենք դա կարող ենք անել ոչ թէ իրարից անջատ երազանքների գիրկը ընկած հայերով, այլ ձեռք ձեռքի բռնած մէկ գաղափարի շուրջ կենտրոնացած դեպի հայրական ապագա քայլող հայերի շնորհիվ: